

## Ա Ղ Օ Թ Ք

(Աղա Նեգրից)

Սառը նկուղի խոնաւ անկիւնում խսիրի վրայ  
Պառկած է մենակ որբ մանկահասակ հիւանդ մի տղայ,  
Տո՛ւր ապաքինումն նորա տանջանքին, խնամո՞ղ Աստուած,  
Բանուոր մանուկ է նա անօգնական—ողջից մոռացուած:

Հրեշտակի թևով ուղարկիր նորան տեսիլք ցնորալից,  
Այդպէս փարատուի դոնէ մօտալուտ մահուան տագ-  
նապից.

Նա օր չտեսաւ... վիճակը նորա զրկանք էր անվերջ—  
Ծեծ ու հայհոյանք դործարանական խուլ ժխորի մէջ:

Եւ դժոխային խիստ աշխատանքից ուժասպառ, տար-  
տամ,  
Որպէս հնձած հասկ օրօրուեց—լնկաւ մերենայի տակ.  
Դիտեմ, Արարիչ, առանց սուրբ կամքիդ և մազն անգամ  
Չի պակսիլ մարդուց, և սակայն որբին մի թող անխնամք:

Սփոփիր նորա կսկիծն ու լացը: Հրեշտակը մահուան  
Թո՛ղ իր ջերմ սիրով, քաղցր զրոյցով փայփայի որբին.  
Ե՛ւ կեանքն անհամբոյր, և՛ քաղցը տանջող—նրանից  
անբաժան  
Թո՛ղ անհետանան, խղճուկի մտքից մահուան ըտպէին:

Թարգմ. ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ